

իսկ թնդանօթներուն երկայնութեմը իրկայնութեմը իրենց լայնութեանը համեմատ են, և որ զարմանալին է՝ նաւուն ընդհանուր շնչ քը, նաւական ճարտարապետութեան կանոնէն՝ և ոչ գծիւ չափ կը վրիպի : Նաւակ մը և երեք պղտի մակոյկ միացած են նաւուն հետ որոց առաջնոր այլ և այլ կտորներէ շինուած է, իսկ մէկաննոր՝ միակտուր փայտէ . որոց ամենքն ալ ունին իրենց նստարանները թի քաջողներուն համար :

### Նոր Մամնուք մը .

Պարոն Պէհր՝ Բեղրոպերկի կայսերական ճեմարանին գիտութեանց մասին պատույ կաճառորդը, վերջի փետրուար ամսուն մէջ թուղթ մը հաղորդեր էր նոյն ճեմարանին, զոր ընդունած էր 'ի Դոմաք նահանդէն (արմատեան Սիպերիա) . այս թղթին մէջ կը ծանուցանէր նոր մամնութի մը գտուած ըլլալը Դացովլքայա անուն ճախճախուտին մէջ :

Տեղացի մը իրեն կորսուած վիթեր՝ բնտուելու ելած ըլլալով, յանկարծ ճախճախուտ դաշտին մէջ մեծ եղինու մը կը տեսնէ գետնէն 'ի վեր բուած . խել ուղելով զայն արմատպէի, կ'իմանայ որ վիթխարի կենդանույ մը գրլիսուն մէկ մասն է . կը կոտրէ վերջապէս իրեն եղինու կարծած մասը, որ իրապէս կենդանույ վրիժակն էր, հետն ալ կտոր մը զիսոյն մորթէն կը փրցունէ :

Մորթը մէկ ու կէս մատ թանձրութիւն ունէր և երկու բուտ և կէս շիկացյն մազով ծածկած : Մարդը այս իրեն, տեսածը իմացուց նաեւ ուրիշներուն մինչև բանը Պր . կուլիայելին ականջը հասաւ : Պր . կուլիայել թղթին մէջ իր ակնկալութիւնը կը յայտնէ, որ ճեմարանը անփոյթ չըլլար անշուշտ իւր

թանդարանը այսպիսի մամմութով մը ճոխացնելու :

Տարակոյս չկայ այս գիտոյն մեծապէս շահաւէտ ըլլալը և ամենակարեոր գիտութեան . վասն զի երկար ժամանակէ 'ի վեր կարեսրութիւն կար մամութի կակուղ մասերուն վրայ ալ քըննութիւն ընելու և մինչեւ հիմա գրտնուած չէր: Ուստի ճեմարանը մասնաւոր գիտնոց յանձնեց, որ են ՊՊ. Պէհր, Պրանտի, Հէլմէսսէն և Շէնք, որ կարեւոր միջոցները 'ի գործ զնին և այդ մամմութին ոսկրոտիքը գետնէն հանելով թեղրոպուրկ հասցունել տան կայսերական թանգարանին մէջ զնելու :

### ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ա. Ռ Զ Ե Խ Ը Ա. Ռ Ն Ե Լ Ո Ւ Կ Ե Ր Պ

### ԳԼՈՒԽ ԺԹ

Ծծմբային, աղային տաք յեր, լեյի և հոտակտ յեր, բուսական և համբային բլրուուտներ :

Ուշների, Ալքուայի, սուրբ Դանիէլի, Ապանյի, ու ասոնց պէս հանքային յրերը խիստ օգտակար են մորթային հիւանդութիւններու, խմելով կամ լուացուելով: Ասոնցմով լուացուելով մորթային եռը, որքիւնը, գոնջութիւնը, բորոտութիւնը կ'ըսունտնան, արեան առասութեան ու բորբոքմանց գէմ ալ կը զօրեն ասոնք . ստամզսի ալ, քանի մը թոքային հիւանդութեանց ալ օգուտ կընեն : Բայց Եւգանեան բլրուներուն վրայ բուն իրենց տեղը խմելով աս ջուրերը աւելի օգտակար են, ան տեղի առողջ, բարեխսառն ու քաջցր օդին ու ծծմբային գոլորշեացը համար :

Փափուկ խառնուած ունեցող անձանց, որ չեն կրնար մարսել աս յրերը, պէտք է կերակրի ատեն քիչ մը գինի հետո խառնելով տալ . ան ատենը նեղութիւն չեն տար, և մեծ օգուտ կ'ընեն հիւանդին: Ամիթի, անանուխի, կիտրոնի, նարընջի:

1 Տաձէկ . Էտոսն Քէմսի :

2 Ալքուայի, կ'ըսունեն փղի, վարագի և նման կենանեաց ակուները, որ բերնենէն դուրս ցցուած են սոսկ իրենց կենաց պահպանութեանը համար :

ծաղկին, սև կեռասի, վալերիանի, կինաբարիսի և ուրիշ տեսակ տնկոց լեզի ջրերը, հանդարտեցընող զօրութիւն ունին, առանց մէջը օզի խառնելու. վասն զի օղին տսքութիւն կը պատճառէ, ու զօրութիւնին կը տկարացընէ :

Դարչնի, թերիակի, Գոյնիայի ջրերն ալ գրքիչ զօրութիւն ունին. ուստի պէտք է կամ ջրի հետ խառնել և կամ տկար տեսակը գործածել: Հիմակուան թժիշներն ամենքն ալ նոյն կարծիքին վրայ են որ բուսական և հանքային թթուուտները զովացուցիչ են մարդուս եթէ ջրին մէջ քիչ մը խառնելու ըլլաս ասոնցմէ: Շատ սընունդ կու տան, ու դիւրամսր են: Ամենէն գործածականն է կիտրոննեան թթուուտը, որ սեղմիչ զօրութիւն ունի և ջղաց զօրացուցիչ է, և մարմնոյն ուժ կու տայ՝ սաստիկ քրտիկը պակսեցնելով: Ետեւէն կու գան տորտեսան, քացխային և ծծմբային թթուուտները, որ ջրով ու շաքարով խառնած օգտակար ըմպելիքներ են:

### ԳԼՈՒԽ Ի

#### Այլ և այլ քաղցրաւենիք:

Սովորական քաղցրաւենիները՝ նարընչի, կիտրոնի, հաղարջի, սերկելի, վարդի, և այլն, զովացուցիչ են ու դիւրամարս: Ասոնց պաղպաղակներն ու օշարակներն ալ նոյն յատկութիւնը ունին: Մեղրով խառնած ջուրը սննդարար և դիւրամարսէ, նմանապէս քացախի ու շաքարի հետ խառնածը: Աս վերջին կերպովս մարդուս քաղցր կ'անցնի. քայց թէ որ քացախը աւելի շատ ըլլայ քան զնուրը, և չափը անցրէ խմելու, մարդուս մարմինը ուժէ կը ձգէ, կը նիշարացնէ, ու կիրքերը կը սաստիկացնէ:

### ԳԼՈՒԽ Ի.Ա.

#### Թէյ կամ յայ ու խահիք:

Թէյը ախորժ ըմպելիք մըն է, ինքրենն ալ, կաթով ալ. ու տկար և փափուկ ստամքսի յարմար: Կաթի սերուցով ալ կը խմուի:

Խահիքն ոմանք առաջըց երինաշափ կը գովէին, ուրիշներն ալ ամենավնասակար կը սեպէին, ու իբրև թունէ մը զգուշանա-

լու բան . հակառակողներուն ըստած այլ և այլ վասնին իրենց աւելի ծուռ երեակայութեանը տալու է, քան թէ բուն խահիքին: Թէ որ իրաւցընէ վնաս մը ունի նէ, չարաչար գործած գործածողներէն է:

Խահիքին մասսանց մէջ կը գտնուին ազդուային և սննդային, աղային և թթուուտաի տարերը. և մասնաւոր ներգործիչ լեզի նիկիթ մըն ալ կայ, ինչպէս թէ ունի և սա իր մասանցը մէջ 100ին երեսներորդ մասը ազող, որ մեր կենդանական գործողութեանց վրայ կը ներգործէ: Ըստ կարծեաց թուաղինի երևելի թժկին խահիքն զովացընող է, բոլորովիին հակառակ օղին զօրութեանը: Գինի շատ խմողները կը փորձեն ամեն օր թէ որչափ հանդարտեցընող է խահիքն: Վասն զի գինիին բորբոքիչ զօրութիւնը զաւած կը աղական բժիշկը մարելու համար յարմար յարեղ գեղ մը սեպելով: Փորձը միայն սորվեցոց իրենց աս գեղթափը: Ընեղին մէջ ժողվուած արիւանյին հիւթերը ցրուելուն համար, ոմանք ըսին սոր մտքի դեղ: Հումապուտ, վէպէր և ուրիշ անուանի թժկին պահապանողական գեղ սեպեցին խահիքն, և ընդհատ ջերմերու դէմ օգտակար: Աս երևելի թժկաց կարծիքը ու ամեն օրուան փորձերը եթէ չեն բաւեր ցուցընելու խահիքին նըրմահալած գեղ անոր մէջի լեզի մասունքը բաւական են ցուցընելու: Սովոր քններ է որ խահիքին սովորութիւնը մըտնելն ի վեր չելվետիայի գրեթէ բոլոր վալլէզէ գաւառը, բնակչաց զգին վրայի խոշոր ուռեցքները պակսեր են: Օգտակար է գլխու և ըղեղի ցաւերիու նաև չխարկած խահիքին հատերը թթջոց գրած ջուրը լսելը:

Ընդհանրապէս խահիքին առաջ եկած կարծեցեալ ջղաց ցնցունքը՝ աւելի երևեկայութիւն է քան թէ իրաւան բան: Իրաւալ որ ըլլայ, ուրիշ բան չէ, բայց եթէ ջղերուն վրայ կամ արեան անօթոց մէջ արդէն պտըող հիւանդութեանց նշաններ: Ինչ որ մանք խահիքին չարաչար գործածութենէն ալ կը կարծեն մեծ մեծ վնասներ, փորձը չիհաստատեր իրենց կարծիքը. վասն զի անթիւ գիպուածներ կը ցուցընեն որ խահիքին չարաչար գործածութիւնը թէ որ քիչ մը ստամոքսի տըկարութիւն պատճառը է, կամ քնասութիւնը ուղիւն ոգող, դիւրաւ կ'անցնին երեսուր ուտելով, կամ թեթև ոգիսաւոր ըմպելիքներով: Ուրիշն ծուռ է ան կարծիքն որ կ'ենթագրէ թէ խահիքն տաքցուցիչ, ցընցող ու մահաբեր նիւթ մը ըլլայ:

## ԳԼՈՒԽ ԻԲ

ԶԻՒՔՊՈՂԱՐ :

Երբոր շատ տաքցուցիչ համեմներով  
շնուած չէ չիքոլաթը, օգտակար է տկար  
ստամբսի և կիսառողջ անձանց: Այս  
թէ ոչ՝ գժուարամարս կ'ըլլայ, և նաև  
բորբոքիչ ստամբսի: Խահվէի կամ կաթի  
հետ որ խառնես, յարմար կու գայ: Ա-  
ռողջարար չիքոլաթ կ'ըսովք՝ քաքածն շա-  
մերի հետ խառնած առանց հոտաւէտ հա-  
մեմի որ խիստ դիւրամարս է:

## ԳԼՈՒԽ ԻԳ

Գարեջոր և գինի:

Աս ըմպելիքը զովացուցիչ է, ստամբս  
շնող և սննդարար: Խորեալ գարեջուրը  
աւելի աղէշ է, և աւելի յարմար ջզային  
խառնուածք ունեցողներուն:

Զափաւոր խմուի նէ գինին՝ առողջարար  
է, մարսողութեան կ'օգտէ և մարդուս ուժ  
կու տայ, մասնաւրապէս երկայն և դը-  
ժուարբութելի հիւանդութիւնն քաշողնե-  
րուն, որոնք մաքրողական ու արեան տա-  
քութիւնը դադրեցընող դեղիք առնելով  
տկարացած կ'ըլլան: Զափազանց խմելով  
շատ գէշ գէշ հետևանքներ ունի: Գինին  
կ'օգնէ նաև ճախճախուտ տեղեաց մահա-  
սիթ դարշահութեանցը դէմ: Վնասա-  
կար օդին սարսափելի հետևանքներէն  
խալքսելու համար, որոնց որ հարկ ըլլա.  
լով անցնիլ ճախճախուտ տեղերէ, ինչ-  
պէս ամառ աստեն Հռոմայ դաշտերէն, ու-  
րիշ դեղ չկայ՝ բայց եթէ շատկեկ գինի  
խմել. փորձը սորվեցուցած է աս գիւտս:  
Ճերմակ ու անուշ գինիները աւելի դիւ-  
րամարս են՝ սաստիկ ու սև գինիներէն: Նոր,  
կծու և սաստիկ թթու գինիները, որ ընդ-  
հանրապէս ծարաւը անցընելու կը գործա-  
ծեն, փախտութիւն, կողացաւ, և աղեաց  
ցաւեր կը պատճառեն. երբեմն երիկա-  
մանց մէջ խիճեր կը գոյացընեն, և նեար-  
դական և իջուածքի հիւանդութիւն ունե-  
ցողներուն վտանգաւոր են:

## ԳԼՈՒԽ ԻԴ

Ոգիաւոր լմպելիքներ, աղբողի, տավենտի,  
ափսինդի, կինաբարիսի թժկական ոդիք,  
բորֆուկան, նարեշի կանուկն հանած ոդիք  
նաև Պրերայի ոդիք:

Աս ոգիաւոր ըմպելիքները, իրենց նախ-  
նական տարերքը ալքոոլ ըլլալով, աւելի  
կամ պակաս՝ բաց միշտ վնասակար են,  
վասն զի ստամբսը և աղիքը կ'այրեն կը  
մրկեն, և մարդուս արիւնը կ'եռացընեն: Անոր համար թոյլ կամ զօրաւոր բորբու-  
մունք կը պատճառեն արեան շրջանին գոր-  
ծարանացը, և անբուժելի հիւանմա, գլխու  
պտոյտ, կաթուած ու ասոնց պէս կիւան-  
դութիւնները ընդհանրապէս առաջ կու  
գան օղի, րում, ու աս տեսակ ոգիք խմե-  
լու սովորութենէն: Որչափ ալ ըսենք ո-  
գիաւոր ըմպելեաց մարդկային ընկերու-  
թեան ըրած վնասները, ոչ երբեք կրնայ  
բաւական ըսուիլ վասն զի ասոնց վնասնե-  
րը անթիւ անհամար են: Բայց մարդասէր  
անձանց ձայնը տկար է աս անպիտան և  
վնասակար սովորութիւնը վերցընելու,  
որ երթալով անելու վրայ է: Մէկ հատիկ  
գեղ այսպիսի մահառիթ սովորութեան  
կրնայ ըլլալ բարեխառնութեան ընկերու-  
թիւնը, որ Ամերիկա և Անգլիա այնչափ  
մեծ օգուտներ ըրին, և օրէ օր ալ ընելով  
կ'աւելնայ իրենց յարգը:

Ակեռողեան ոգիքներուն մէջ երևելի են  
քինաբարինայի և կինաբարիսի քքիները, ո-  
րոնք չափաւոր որ գործածուին, սաստիկ  
հիւանդութենէ տկարացած ստամբսը կը  
զօրացընեն:

Ուավենտի ոգիքը կրնայ մաքրողականի  
պէս օգտակար ըլլալ անմարսութեան և  
փորհարութեան, և տղոց ճճիներուն:

Ափսինդի ոգիքը ստամբսի արեան յամբ  
առատութեանց համար պէտք չէ գործա-  
ծել, վասն զի ան ատեն փոխանակ պակ-  
սեցընելու՝ աւելի կ'անեցընէ. և ոչ ալ մէ-  
ջի լեղի տարերքին զօրութիւնը կը բաւէ  
ալքոոլին տաքցուցիչ զօրութիւնը բթացը-  
նելու: Խսկ ընդհակառակն ափսինդի ջու-  
րը խիստ շատ կ'օգտէ ստամբսի, ու յամբ  
բորբոքմունքներէն աւրուած աղիքներու:  
Կրնայ տրուիլ նաև արեան անօթներուն  
բորբոքմանցը՝ երբոր ստամբսի չեն, ու գե-  
ղին գոյնով կ'երեւնան մարդուս վրայ: Կի-  
նաբարիսի ոգիքն ալ ափսինդին զօրու-  
թիւնը ունի, ոգիքը օգուտ ընէր՝ բայց ե-

թէ այն հիւանդութեանց, որոնց մէջ արեան տաքութեան նշան չի այ, իսկ կինաբարիսի ջուրը ախորժակ կը բանայ, վը քախտութիւնը կը փարատէ, մարսողութիւնը կը զօրացընէ, թէ որ աս տկարութեանց պատճառը յամի տաքութիւնն է:

Թոփքոլեան ըսուած լեղի ոգիքը կրնայ խիստ օգտակար ըլլալ ստամբուսի և աղեաց, ու երկայն տաքութեանէ կորացնցուցած ուժը կը նորոգէ:

Նարնջի կճեպէն հանած, խտիմպուրկի, Պրերայի, Պոնաթոյի, և երկայնակեաց ըսուած ալքոլեան ոգիքը իրենց մէջ հակառակ նիւթեր ունին զովացոցիչ և տաքցուցիչ. ուստի աղէկ նայելու է որը աւելի զօրաւոր է աս յատկութիւններէն, և ըստ այնմ գործածելու է խոհեմութեամբ. ինչ որ պէսք է հիւանդութեան տեսակին և հիւանդին զանազան հանգամանացը:

### ՎԵՐՋ

---

### ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

---

Որ և իցէ գուշնոյ մազերը սեցնելու հնարք.

Կէս լիտր ջրոյ մէջ եփէ 30 կրամ կապարի<sup>1</sup> ածխաւոր, նոյնչափ ալ ոպնիազի տաշեղ: Աս բաղադրութեամբ լուա մազերդ, և գործածած սանտրդ պալ թալթիէ մէջը, քիչ ատենէն կը տեսնաս որ մազերդ կը սկնան: Այս ներկը աւելի գեղեցիկ սև գոյն մը կ'առնու թէ որ մէջը<sup>2</sup> կրամ քափուր դնելուս:

1 Գ.Հ. Plombagine.

Անդղիացի ազնուական խամթունայք շատ կը գործածեն այս բաղադրութիւնը՝ մազերնին սեցնելու համար:

Հին և նոր ապակի.

Պոմպէի և Հերքուլանոնի մէջ գտուած ապակիները, որ ասկէ իրեն 2000 տարի առաջ շինուած են, բնալուծօրէն քննուելով Պոնդան (Bontemps) գիտնականին ձեռքբով, 'ի Բարիզ, գրեթէ հիմակուան շինուածներուն նման դըտուեցան: Իրեն դրկուած կտորներն ամենն ալ թափծու և կլոր էին՝ և ոչ փըչած ապակի. գոյներնին կանաչագոյն կապոյտ: Իրենց զանգուածոյն խառնուրդը այսպէս էր.

Պոմպէի ապակի

Գայլախաղ	· · . . .	69, 43
Կիր	· · . . .	7, 24
Սոստ	· · . . .	17, 31
Պաղլեղ	· · . . .	3, 55
Ճանդ երկաթոյ	· · . . .	1, 15
— մանկանեղի	· · . . .	0, 39
— պղնձոյ	· · . . .	0, 04

99, 08

Նոր աղեկ ապակի

Գայլախաղ	· · . . .	72, 50
Կիր	· · . . .	13, 10
Սոստ	· · . . .	13, 00
Պաղլեղ	· · . . .	1, 00
Ճանդ երկաթոյ և մանկանեղի	· —, 40	

100, 00

դոսի և անոր քեռառն Մարկիանոս կայ-  
սեր, կայսերութիւնն զօրաւոր կամ ըբո-  
նաւոր իշխանաց ձեռք ընկալ՝ (աւելի  
թրակացի իշխանաց), որը դար ու կէս  
տիրեցին. ասոնց վերջընթերն Մօրիկ  
կայսր՝ ըստ մեր պատմչաց՝ Հայ էր, յօ-  
շական գեղէ Արագածոտն գաւառի<sup>1</sup>.  
զասոր յաջորդ Փոկասը սպաննելով ա-  
նուանին Հերակլ կայսր՝ յափշտակեց ըգ-  
թագը և ժառանգեցուց իր ցեղին ամ-  
բողջ դար մը. բայց որովհետև թէ ին-  
քըն թէ իր նախորդաց շատերն յա-  
փշտակող եղեր էին, և իր յաջորդքն  
ալ անարժան և ժողովրդեան անսիրելի  
էին, թագախնդրովթիւնն կամ կայսե-  
րութեան փափագն և կոփին՝ սովորա-  
կան բան մ' եղաւ զօրաւոր և ճարպիկ  
իշխանաց: Ասոնց մէջ՝ եթէ ոչ շատու-  
թեամբ թուոյ՝ բայց շատութեամբ ար-  
դեանց և ուժոյ՝ նշանաւոր էին զրեթէ  
բոլոր Ե-ԾՈ. դարուց միջոց մեր համազ-  
գի Հայ իշխանաւորքն և զօրավարքն՝  
Կ.Պօլսի ինքնակալաց ծառայովթեան  
մէջ, ինչպէս յայտնի է ամենայն պատ-  
մագիտաց. ապա զարմանք չէր եթէ ի-  
րենք ալ՝ (որ Յունաց կայսերութեան  
մէջ մեծամեծ պաշտօնակալք կամ կու-  
սակալք և զօրավարք էին, և յունարէ-  
նը իրենց երկրորդ մայրենի լեզու ըրեր  
էին), բնիկ Յոյն իշխանաց հետ կայսե-  
րական թագին փափագող կամ յա-  
փշտակող ըլլային. մանաւանդ որ շատ  
հեղ իրենցմէ առաջ՝ թէ ազգային թէ  
յոյն զօրքն և իշխանքն իրենց կընծայէին  
թագը: Արդէն Հերակլ վերջին պայա-  
զատաց ատեն մէկ երկու այսպիսի ան-  
ձինք փորձ փորձեցին, թէ և ոչ յաջո-  
ղեցան. ինչպէս Շապուհ մը ամասու-  
նի կամ պարսիկ, որ երբեմն արևմը-  
տեան Հայոց զօրավար կամ իշխան էր,  
և յամին 667 թ կոստանդ (թուն Հե-  
րակլի) կայսերէն զուլիս քաշեց, բայց  
դիպուածով մը շուտով մեռաւ (ձիէն  
ընկնալով): Հետևեալ տարին կոստան-  
դը սպանողը իրենց կայսր ընտրեցին

զՄծէժ, որ հաւանօրէն թոռն էր մեր  
Մծէժ գնունի զօրավարին, որ Հերակլի  
ատեն քաջութեամբ և խոհեմութեամբ  
շատ անուանի էր. իսկ կայսր ընտրուած  
Մծէժն աւելի երևելի էր իր հասակին  
մեծովթեամբ և գեղեցկովթեամբն, որոյ  
համար ընտրեցին զսա սպաննելցին հա-  
կառակորդքն, և խոստացան պաշտպա-  
նել. վասն զի ինքն Մծէժ կու հրաժա-  
րէր և յանձն չէր առնուր. և անոնց տի-  
րատեցովթեան ալզոհ եղաւ. և ոչ տա-  
րի մը ակամայ կայսրովթեան անու-  
նը կրելով՝ թագին հետ իր թագագան-  
գուր զուլիսն ալ կորոյս (669), զոր Սիրա-  
կոսայէն (Սիրկիլիոյ քաղաքէ) խաւրեցին  
՚ի Կ.Պօլս առ որդին կոստանդայ կոս-  
տանդին Դ. առ թէ ծծնեամբ և թէ ար-  
դեամբք արժանի ժառանդ էր աթոռոյն,  
բայց անարժան հօրը նման անարժան  
որդի մը յաջորդ ունեցաւ, այն է Յուս-  
տինիանոս Բ: Ասոր անկարգովովթեանց,  
անգիտովթեանց, և անկրօնովթեան չդի-  
մանալով իր ժողովուրդն՝ գահընկէց ը-  
րին (695), և տեղը նստուցին Ղեղանդ  
պատրիկ քաջ զօրավարը, որ հայրե-  
նեզօք էր յիաւարիոյ կիւկիկիոյ, և հա-  
ւանօրէն Հայ, ինչպէս էր անտարակոյս  
իրմէ ոչ շատ տարի վերջը ընտրուող և  
25 տարի (747-741) կայսր եղալ լ և ուն  
իսաւրացին. (թէպէտ վարքովն և գործ-  
քերովն իր նախորդէն՝ (Յուստինիանո-  
սէն՝ պակաս զդրութի չեղաւ): Ղեղոնդ  
թէ և սիրելի և արժանաւոր անձն, բայց  
իրեք տարիէն ետև (698) իրմէ բռնա-  
գունի մը ձեռք ընկաւ. Ապսիւնար ա-  
նունով կոռիկոսցի մը տիրեց Կ.Պօլսոյ,  
և Ղեղոնդի քիթը կտրելով, (ինչպէս  
Ղեղոնդ ալ Յուստինիանոսին կտրեր էր)  
փակեց վանքի մը մէջ, և ինք զինքն ա-  
նուանեց Տիրեր Բ:

Այսպէս կայսերովթեան կամ թա-  
գին խաղալիկ եղած ատեն՝ մեր Վար-  
դանն այլ իր կայսերական երազը տե-  
սաւ: Իր ինչ տոհմէ կամ տունէ ըլլայն  
յայտնի չէ, թէ և յումանց Մամիկոնեան  
կարծուի. անշուշտ այն Հայերէն էր որ  
շատոնց Յունաց ծառայովթեան մէջ  
մտեր և յառաջացեր էին. իր հայրն այլ

<sup>1</sup> Հաս Յունաց էր յԱրաքիսոս. քաղաքէ Կա-  
պատովկիոյ, որ է ի Փոքր Հայս, և բուն ցեղն  
չոռվաճեցի էր, կըսեն: